փող, 1000 ոչխար, եզ, կով, պղինձ, ցորեն, գարի, ալիւր և այլ իրեր։ Այնուհետև գալիս է իր խմբով Ալէքսի Մանուկեան հայ աւազակապետը և լրացնում Բէգ-խանի պակաս թողածը։ Ապա 1917 թուի Օգոստոսին Մամ-Թաղին իր զինուած խմբով մտնում է գիւղ և բռնի առնում 300 թուման փող, ցորեն, գարի, ոչխար, գառ, իւղ, պանիր և ապա մըտնում է Քրդեր։

Այդ հարստահարութիւնների հետևանքն այն է լինում, որ Նրանցից 100 հոգի թողնում են իրենց տուն ու տեղը և գաղթում դէպի Նոր—Ջուղա, Նասէրի, Նամակերտ և վերջապէս բոլոր այն վայրերը, ուր կարող են ազատ ապրել, իսկ 100 հոգի էլ սովամահ են լինում։

Մտնում ես գիւղ և տես քո վրայ խոր տպաւորութիւն է գործում գիւղացիների վիճակը։ Ահա հարկերի տակ Դուռ տեսնում ես մարդիկ, որոնք քաղցից դեղնել, նիհարել և կմախք են դարձել։

Այդտեղ ես ականատես եղայ բազմաթիւ սրտաճմլիկ տեսարանների և պատկերների, որոնք տխուր յիշատակ թողին սրտիս մէջ և յաւիտենական չպիտի ջնջուեն իմ յիշողութիւնից։ Ահա մի քանիսը այդ պատկերներից.

—Անշուք մի յարկի տակ հանդիպեցի 18 տարեկան մի բարձրահասակ, գեղեցիկ հայ օրիորդի. Նրա դէմքը նիհար էր և գունատ, թախիծը արտափայլում էր Նրա սեւորակ աչքերի մէջ։ Նա յենուած էր երկու փայտէ գաւազանի և անքայլով քայլում էր.

—Հիւանդ ես, հարցրի օրիորդին։

—Ո՛չ, եղբայր, քաղցած եմ, պատասխանեց Նա տխուր ձայնով։

—Ահա մի այլ ընտանիք. փոքրիկ սենեակի լուսամուտի առաջ նստած էր միջին տարիքով մի կին, հիւծուած ու մաշուած. Նրա կողքին, ցնցոտիների մէջ համարեա մերկ, հիւանդ պառկած էր մի երիտասարդ գեղջկուհի, Նա վերջին կոիւն էր մղում մահուան դէմ. իսկ Նրա չորս փոքրիկ երեխաները շրջապատած իրենց մօր աղիողորմ լայում էին քաղցից։

—Ահա մի այլ յուզիչ տեսարան. մի մայր պառկած էր չոր գետնին՝ երեք փոքրիկ երեխաներով. ընտանիքի հայրը նոր էր մեռել՝ պատան չկար, որ թաղէին. Նրա կինը դառն հեծկլտում էր, իսկ